

Թեան բուն աղբիւրն է Աղէքսանդրեան Պապպոսի աշխատութիւնը, նոննոսը կամ աւելի ճիշտ կեղծ-նոննոսը նոյնպէս Զ-րդ դարի Աղէքսանդրեան շրջանի մատենագիրներից պիտի լինի, շուտով հրատարակելու ենք Hermes trismegistos-ի մի հատուած, որի ծագումն ևս Աղէքսանդրիայից է, նորագոյնացեալ Դաւիթը նոյնպէս Զ-րդ դարի Աղէքսանդրեան դպրոցի մեկնիչ է՝—պարզ է որ Աղէքսանդրիայի դերը Հայոց մատենագրութեան վերաբերմամբ շատ մեծ պէտք է համարել:

(ՆԱՐԵՆԱԿԵԼԻ)

Յ. Մանանդեան

ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հ Ս Ց Մ Ո Մ Զ Է Ն Ի

Այդ եղաւ 54 թ: Հռոմն այս նոր թեկնածուի դէմ ուղարկեց Դոմետրիոս Կորբուլան զօրավարին 54 թ. որ հռոմէական զերիշխանութիւնը Հայաստանում պէտք է տարածէր: Վաղարշ իւր զօրքը յետ էր կոչել Հայաստանից պալատում վերսկսած երկպառակութիւնների համար: Կորբուլոն երկար բանակցութիւններից ու լրջմիտ շրջահայեցողութիւնից յետոյ նոր լեզիոնով թարմացած 30,000 հոգով 58 թ. եփրատն անցնում է ու մտնում Հայաստան: Զօրքը Հայոց հողի վրայ է ձմերում: «59 թ. գարնանը Կորբուլոն սկսում է յարձակողական արշաւանքն Արտաշատի ուղղութեամբ: Հէնց նոյն ժամանակ հիւսիսից ներս են խուժում նսի վրացիները, որոնց թագաւոր Փառաւոմանը իւր սեփական չարագործութիւնը ծածկել ցանկանալով՝ հրամայում է գլխատել իւր Հռադամիստ որդուն և աշ-

խատում է իւր պատրաստակամութեամբ մուտքնել տալ առաջուայ յանցանքը: Հայաստան խուժեցին նաև հարաւ — արեւմտեան հարեան մոսխերը և հարաւից Կոմագէնի Անտիոքոս թագաւորը: Վաղարշ արքան ստիպուած էր հերկանների ապստամբութիւնը ճնշելու համար իւր պետութեան հարաւային սահմաններում մնալ և չէր կարողանում և կամ չէր կամենում անմիջական կերպով մասնակցել կռուին: Տրդատ քաջաբար դիմադրեց, բայց նա ոչինչ չէր կարող անել թշնամի ուժերի ահագին դերազանցութեան առաջ: Նա իզուր էր աշխատում հասնել հռոմէացիների հաղորդակցութեան դժին, որով պաշար էին ստանում նորա Սև ծովի վրայով Տրապիզոնից: Հայկական բերդերն առնուեցին և բերդապահ զօրքերը կոտորուեցին մինչև վերջին մարդը: Արտաշատի պատերի տակ մի կռուի մէջ ջարդուելով՝ Տրդատ ընդհատեց անհաւասար կռիւը և փախաւ պարթևների մօտ: Արտաշատն անձնատուր եղաւ և այնտեղ՝ Հայաստանի բուն սրտում հռոմէական բանակն անց կացրեց ձմեռը: 60 թ. գարնանը Կորբուլոն ամբողջ քաղաքը հրի ճարակ դարձնելով՝ դուրս ելաւ այգտեղից և երկրի մէջտեղով անցաւ միւս մայրաքաղաքին՝ Տիգրանակերտին, որ գտնուում էր Տիգրիսի հովտում: Մծբինից հիւսիս: Զօրապետից առաջ արդէն ընթանում էր այն ահն ու սարսափը, որ ձգել էր երկրում Կորբուլոնը՝ այրելով Արտաշատը: Նա ոչ մի տեղ լուրջ ընդդիմութեան չպատահեց: Տիգրանակերտը կամաւորապէս բաց արաւ իւր դռներն յաղթողի առաջ, որն այս անգամ խելացի հաշիւներով ողորմածաբար վարուեց քաղաքի հետ: Տրդատ մի անգամ էլ փորձեց վերադառնալ և շարունակել կռիւը, բայց առանց դժուարութեան հեռացուեց: 60 թ. վերջում ամբողջ Հայաստանը Հռոմի հպատակ էր:

«Հասկանալի է, որ Հռոմում այլ ևս ուշք չէին դարձնում Տրդատի վրայ: Տիգրան դահիշխանը, որ իւր հօր կողմից շերտվեա Մեծի թոռան որդին էր, մօր կողմից Կապադովկիայի Արքեղայոս թագաւորի թոռան թոռը,

կնոջ կողմից Մարինեան թագաւորական տան ազգական
և Աւգոստոսի ժամանակը Հայաստանում իշխող վաղան-
ցուկ թագաւորներից մէկին ցեղակից, — այժմ Ներոն կայս-
րից Հայոց թագաւորութիւնն ստացաւ և Կորբուլոնի ա-
ջակցութեամբ դա՛ քարձրացաւ 60 թ. Նա կրթուել էր
Հռոմում և ընդհանրապէս Հռոմէական կառավարութեան
գործիք էր: Հայաստանում մնաց Հռոմէական երկրագահ
զօրքը, որ բաղկանում էր 1000 զինուորից 3—4 հարիւր
հեծեալներից և հետեակներից, որոնք պատկանում էին
օժանդակիչ զօրքերին: Հայաստանի սահմանային երկիր-
ների մի մասը բաժանուէց բուն երկրից և տրուէց Հա-
յաստանի հարեան թագաւորներին՝ Պոնտոսի և Տրապի-
զոնի թագաւոր Պոլեմոնին, Փոքր Հայքի թագաւոր Արիս-
տոբուլին, Վրաց Փառասմանին և Կոմմոգէնի Անտիոքոսին:
Հայոց նոր թագաւորն իւր կողմից, ի հարկէ Հռոմէացի-
ների օգնութեամբ մտաւ սահմանակից պարթեական Ս-
ելաբէնի նահանգը, յաղթեց տեղական կուսակալ Մոնո-
բազին և այնպէս էր ցոյց տալիս, իբր թէ միտք ունի
պարթեաներից այդ մասն էլ խլելու:

Գործերի այս ընթացքն ստիպեց պարթեաներին դուրս
գալ կրաւորական դրութիւնից: Խօսքն այժմ ոչ թէ Հա-
յաստանը նորից ձեռք ձգելու, այլ պարթեական պետու-
թեան ամբողջութեան մասին էր: Երկու մեծ պետու-
թիւնների մէջ վազուց ի վեր պատրաստուող պատերազմն
անխուսափելի էր թւում: Պարթեական մեծամեծների
ժողովում Վաղարշ նորից նշանակում է Տրդատին Հայոց
թագաւոր, նրա հետ միասին ուղարկում է և զօրապետ
Մոնեսին (Monaeses) Հռոմէացի ուղուրպատորի հետ կըռ-
ուելու: Պարթեաները սլաշարում են դրան Տիգրանակեր-
տում, որ դրուել էին Հռոմէացի զօրքերը: Վաղարշ ինքը
պատերազմական գլխաւոր ուժերն հաւաքել սկսեց Ասո-
րիքի գլխաց՝ Միջագետքում և սպառնալ սկսեց Ասորի-
քին (61 թ. սկզբին): Կորբուլոնը, որ Կվադրատի մահից
յետոյ միաժամանակ հրամանատար էր թէ Կապադովկիա-
յի և թէ Ասորիքի զօրքերին, և խնդրել էր կառավարու-

Թեան՝ Կապադովկիայում՝ և Հայաստանում առանձին կուսակալ նշանակել, — առժամանակ երկու լեզիոն է ուղարկում Հայաստան Տիգրանին օգնելու, իսկ ինքը շարժւում է դէպի Եփրատ Պարթևաց թագաւորին դիմաւորելու։ Սակայն այս անգամ՝ ևս գործը ոչ թէ կուով, այլ դաշինքով վերջացաւ։ Վաղարշ լաւ գիտենալով իր սկսած գործի վտանգալից լինելը, ցանկութիւն յայտնեց ընդունել այն պայմանները, որ ապարդիւն կերպով առաջարկուած էին հռոմէացիներին կողմից հայկական պատերազմից առաջ և համաձայնուեց, որ իւր եղբայրն Հայաստանն ստանայ որպէս հռոմի աւատառու։ Կորբուլանն ընդունեց այդ առաջարկը։ Նա դադարեց Տիգրանին պաշտպանելուց, հռոմէական զօրքերը դուրս հանեց Հայաստանից և թոյլ տուաւ Տրդատին վերահաստատուել կրկին իւր տեղում, մինչդեռ պարթևական օժանդակիչ զօրքերն ևս հեռացան այնտեղից։ Ի պատասխան այդ բանի Վաղարշ պատգամաւորութիւն ուղարկեց Հռոմ և յայտնեց, որ իւր եղբայրը պատրաստ է Հայաստանն ընդունել հռոմէական կառավարութիւնից, որպէս աւատական կալուածք»¹⁾

Սակայն Հռոմն անբաւական մնաց գործերի այդպիսի ելքից և Լուցիոս Յեզենիոս Պետին յանձնեց Հայաստանի նուաճման գործը։ «Պետ անմիջապէս գործն սկսում է, Մելիտենէի (Մալաթիա) մօտով անցնում է Եփրատն ու մտնելով Հայաստան, ձեռք է ձգում սահմանային մօտիկ բերդերը։ Սակայն տարածած եղանակների պատճառով նա ստիպուած էր դադարեցնել պատերազմական գործողութիւնները և հրաժարուել ենթադրաբար նոյն տարում գրաւուելիք Տիգրանակերտից։ Բայց որպէս զի կարելի լինէր հետեւեալ գարնան իսկոյն առաջ շարժուել, Կորբուլանի պէս սա ևս թշնամու երկրում ձմերոցի բնակարաններ գրաւեց Ռանդէա քաղաքի մօտ, որ գտնուում է Արածանու կամ Մուրադ չայի ճիւղերից մէկի վրայ, ոչ հեռու այժմուայ Խարբերդից (Charput)։ Իսկ բանակի աղխը

1) Տե՛ս V 386—388.

կանանց ու երեխաներին տեղաւորեց այդտեղից ոչ հեռու անառիկ Առսամոսատ բերդի մէջ:» ¹⁾

Վաղարշ օգտուում է յարմար առթից և իւր զօրքերը կրկին Հայաստան տանելով, պաշարում է Ռանդէա քաղաքը և նախ քան Կորբուլոնի Ասորիքից Պետին օգնութիւն հասցնելը, ստիպում է սրան անձնատուր լինել: «Անձնատուր լինելու պայմաններն հետեւեալներն են. հռոմէացիները պէտքէ Հայաստանից հեռանային, գրաւած բոլոր բերդերը վերադարձնէին և իրանց ձեռքում եղած ամբողջ պաշարը պարթևներին յանձնէին, որին մեծ կշարիք ունէին սորա: Վաղարշ իւր կողմից յայտնեց, որ չնայած այս պատերազմական յաջողութեան, նա պատրաստ է դիմել կայսերական կառավարութեան խնդրելու, որ իւր եղբայրը նշանակուի Հայոց թագաւոր որպէս հռոմէական աւատաւոր իշխան և համաձայն է այդ նպատակով պատգամաւոր ուղարկել Հռոմ ներոնի մօտ:» ²⁾

Վաղարշ ուզում էր այսպիսով գործը կրկին խաղաղութեամբ վերջացնել՝ հաստատ գիտենալով, որ հռոմէացիների համար այդպիսի պարտութիւնները աւելի պատերազմական եռանդ են բորբոքում, քան ուժերը ջլատում: Հռոմէացիները պատերազմ են հրատարակում և Կորբուլոնին Արեւելքում լիազօր հրամանատար կարգելով, յանձնարարում են նրան Հայաստանի նուաճման գործը ղէնքով գլուխ հանել:

«63 թ. գարնանը Կորբուլոնը, համաձայն իրան տուած հրամաններին, սկսեց յարձակողական շարժումն և իւր չորս լեգիոններն անցկացրեց Մելիտինէի մօտ Եփրատից Հայ-պարթևական պատերազմական գլխաւոր ուժերի դիմաց, որ հաւաքուած էին Առսամոսատում: Բայց ռազմական գործողութիւնները կարեւոր հետեւանքներ չունեցան. առնուեցին միայն հակահռոմէական հայ ազնուականներին պատկանող մի քանի բերդեր: Ընդհակառակը, նոյն իսկ

1) Տես V 389.

2) V 390.

այս արշաւանքն ևս դաշինքով վերջացաւ: Կորբուլունն ընդունեց նախապէս իւր պետութեան մերժած պարթեաների կողմից արուած առաջարկները միայն այն պայմանով, (ինչպէս երևաց դործի ապագայ ընթացքից), որ Հայաստանը միշտ պատկանի պարթեական տան կողմնակի ճիւղերից մէկին, իսկ հռոմէական կառավարութիւնը առնուազն՝ դատելով ըստ այդ համաձայնութեան ընդհանուր բնաւորութեան, համաձայն էր այսուհետեւ Հայաստանի թագն յանձնել ուրիշ ոչ ոքի, բայց միմիայն Արշակունիներից մէկին: Իրա վրայ աւելացրին նաև այն, որ Ռանդէայում, հէնց այնտեղ, որտեղ հռոմէացիներն անձնատուր եղան պարթեաներին, Տրդատը հրապարակաւ պէտքէ գլխից ցած առնէ արքայական թագը երկու կողմի զօրքերի առաջ և դնէ կայսեր պատկերի մօտ, խոստանալով ծածկել միայն այն ժամանակ, երբ կընդունուի կայսրից և անպատճառ հռոմում: Այս բոլորը կատարուեց 63»¹⁾

«Խաղաղութեան պայմաններն հաստատուեցին և իրագործուեցին: Պարթե գահիշխան Տրդատն իւր խոստման համաձայն 66 թ. Հռոմ մտաւ 3000 պարթեական հեծեալների ուղեկցութեամբ և իբրև պատանդ իւր հետ տարաւ իւր երեք եղբայրների և Ադիաբենի թագաւոր Մոնոբադի օրդիններին: Նա ծունկ չոգած խոնարհուեց իւր վեհապետի առաջ, որ նստած էր մայրաքաղաքի հրապարակում դրած կայսերական գահի վրայ և կայսրը խուռն ժողովրդի առջև նրա գլխին թագ դրաւ և կապեց արքայական ժապաւէնը²⁾ Շուտով երևան եկան օգտակար

1) Տես 391—92.

2) Այս հատորի մի այլ մասում Մոմգէն խօսելով Պարթե Արշակունիների կրօնի մասին՝ ասում է, որ քրմերը մի տեսակ խորհրդատու մարմին էին թագաւորների համար. յետոյ աւելացնում է. «Հայոց թագաւոր Տրդատը (խօսքը վերոյիշեալ Տրդատի մասին է), որ ծագմամբ Արշակունի էր, Հռոմ եկաւ մոգերի ուղեկցութեամբ. նոցա ցուցումներով թագաւորն արշաւում էր, նոցա ցուցումներով ճաշում նոյն իսկ ներոնի հետ: օրը սերով լսում էր այլազգի իմաստունների վարդապետու-

Հետեւանքներն այն բանի, որ ձեւական կերպով տասը տարի տեղոյ այս պատերազմը երկու կողմից ևս զսպուած և նոյն իսկ՝ կարելի է ասել՝ իրադաշուութեամբ էր առաջ տարուում և այն բանի, որ այդ պատերազմն իրականապէս վերջացաւ Հայաստանի Պարթեաց կողմն անցնելով, պահելով միեւնոյն ժամանակ աւելի զօրեղ արեւմտեան տէրութեան նկատմամբ հարկաւոր յարգանքը։ Հայաստանն աւելի շատ կախումն ունէր հռոմէացիներից նոցա ճանաչած ազդեցին հարստութեան իշխանութեան տակ, քան այն թագաւորների իշխանութեան ժամանակ, որոնք տրուում էին հայերին, առանց նոցա կամքին։ Հռոմէացի երկրապահ զօրքը մնաց առնուադն Սոփէնի երկրում, որ անմիջական կերպով բաժանուում էր Եփրատով։ Արտաշատը վերաշինելու համար խնդրուեց և ստացուեց կայսեր թոյլատուութիւնը, իսկ շինութիւններ կառուցանելու գործում ներոն կայսրն աջակցում էր թէ փողով և թէ գործավարներ ուղարկելով։ Երկու զօրեղ պետութիւնների մէջ, որոնք Եփրատով էին բաժանուում, ոչ մի ժամանակ դեռ այնպիսի բարեկամական յարաբերութիւններ չէին հաստատուել, ինչպէս Ռանգէայում տեղի ունեցած դաշնագրութիւնից յետոյ, ապա ներոնի կառավարութեան վերջին տարիները, դրանից էլ յետոյ Ֆլաւիանների տնից երեք կայսրների իշխանութեան օրով։¹⁾

(Վերջը միւսանգամ).



Թիւնները և ներկայ էր լինում այն ժամանակ, երբ մոգերն արտաքսուում էին չար ոգիներին։ V 348.

1) V 392—893.